MY FOREST
ARMENIA

# ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2022

# Բովանդակություն


ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ
էջ 3

ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ
էջ 4

ՄԵՐ ԹԻՄԸ
էջ 5

ԱՆՏԱՌՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
էջ 6

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
էջ 7

ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓՈՒՄ
էջ 8

ՏՆԿԱՐԱՆՆԵՐ
էջ 16

ՍԵՐՄԵՐ
էջ 17

ՋԵՐՄՈՑ
էջ 18

ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ
էջ 19

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ
էջ 20

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԴԱՇԻՆՔ
էջ 21

ՄԱՐԴԻԿ
էջ 22

ՖԻՆԱՆՍՆԵՐ
էջ 24

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ
էջ 25

ՆՎԻՐԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
էջ 26

ՆՎԻՐԱՏՈՒ ԱՆՀԱՏՆԵՐ
էջ 27

# Պատմություն և արժեքներ

Մեր առաքելությունն է կայուն կերպով ավելացնել անտառային ծածկույթը և պահպանել կենսաբազմազանությունը՝ տնկելով բազմաթիվ տեղական ծառատեսակներ: Մենք առաջնորդվում ենք հետևյալ արժեքներով.

- **թափանցիկություն**
- **պատասխանատվություն**
- **արդյունավետություն**
- **հոգատարություն**

«Իմ անտառ Հայաստանը» հիմնադրվել է 2019 թվականին: Գործունեության առաջին տարում Լոռու մարզում կառուցեցինք երկու տնկարան՝ անտառի կենսաբազմազանությանը բնորոշ տընկիներ աճեցնելու համար: Երկրորդ տարում տընկեցինք մեր առաջին տնկիները Շիրակամուտի անտառտնկման տարածքում: Մենք նաև որոշակիորեն նպաստում ենք մարզի բնակչության զբաղվածության խնդրի լուծմանը՝ այդպիսով ինչոր չափով բարելավելով մարզի սոցիալական ապահովության և տնտեսական վիճակը:

Մեր հիմնական աշխատողների թիվը հասել է 49-ի, որոնց գրեթե 80%-ը Լոռու մարզի բնակիչներ են: Ծառատունկի և խնամքի սեզոնին նրանց են միանում մինչև 200 հոգի՝ կրկին Լոռու մարզից:

Մեր գործունեության ընթացքում արդեն անտառապատել ենք մոտ 307 հա տարածք Լոռու և Տավուշի մարզերում, որտեղ մեր գործընկերների և նվիրատուների աջակցության շնորհիվ տնկել ենք ավելի քան 1 միլիոն (1.042.737) ծառ: 2022 թ.-ին մեզ միացել է 525 կամավոր՝ միասին տնկելու, մուլչապատելու կամ ջրելու նորատունկ ծառերը:

Նոր անտառներ ստեղծելը շատ կարևոր է Հայաստանի և մոլորակի համար, առավել կարևոր է գոյություն ունեցող անտառային էկոհամակարգերի պահպանությունը: Հայաստանն ունի արժեքավոր բնական անտառներ, որոնք պահպանության կարիք ունեն: «Դիլիջան» ազգային պարկում մեր գործունեության հիմնական նպատակն անտառպահպանման ու անտառվերականգնման աշխատանքներ իրականացնելն է:

Շրջակա միջավայրը բարելավելուն զուգահեռ մենք աջակցում ենք երիտասարդ ուսանողներին, ովքեր ցանկանում են աշխատել անտառագիտության ոլորտում: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ համալսարանի Վանաձոր քաղաքի մասնաճյուղի բակում ավարտեցինք ժամանակակից ենթակառուցվածքներով ջերմոցի տեղադրման աշխատանքները, որտեղ փակ արմատային համակարգով աճեցնում ենք տնկիներ: Ջերմոցի առկայությունը համալսարանի բակում հնարավորություն է տալիս ուսանողներին տարբեր փուլերում մասնակցել աշխատանքներին, հետազոտել և ուսումնասիրություններ անել:

**307 հա**

երեք տարում

# Հիմնադրի ուղերձը

2022 թվականը կարևոր տարի էր «Իմ անտառ Հայաստանի» համար: 2022 թվականին շուրջ 202 հա անտառտնկման տարածքում 658.000 ծառ ենք տնկել՝ կրկնակի ավել, քան նախորդ տարում: 2023-ին մեր թիմը պլանավորում է տնկել 800.000 ծառ: Այս ամենը հնարավոր է իրականացնել մեր այն հրաշալի նվիրատուների շնորհիվ, ովքեր ամեն տարի մեզ հետ են, և նրանց շնորհիվ, ովքեր միանում են մեզ այս ճանապարհին: Ուզում ենք խորապես շնորհակալություն հայտնել ձեր վստահության և ակտիվ ներգրավվածության համար՝ հանուն մեր մոլորակի բարելավման գործի:

Միայն ծառերի թիվը չէ, որ աճել է: 2022-ին մեծացել է նաև մեր թիմը. այժմ մեր մշտական աշխատողները 49-ն են, իսկ անտառտնկման աշխատողների թիվը հասել է 200 հոգու: Այս տարիների ընթացքում 55 միլիոն դրամ հարկ ենք վճարել: Այսպիսով, անտառստեղծման և անտառվերականգնման մեր գործունեությունը, որ սկսել ենք երեք տարի առաջ, ոչ միայն մարդկանց զբաղվածության որոշակի խնդիր է լուծում կամ հարկերի տեսքով ֆինանսական մուտքեր է ապահովում կառավարությանը, այլ նաև բարելավում է շրջակա միջավայրը և գործում է հանուն երկրի ապագայի:

Սակայն միայն թվերը չեն, որ կարևոր են: Ինձ համար ամենակարևորն այն է, որ բոլորը գիտակցեն անտառների հիմնարար նշանակությունը մոլորակի վրա կյանքի պահպանման համար: Բոլորը պետք է հասկանան, որ մեր և ապագա սերունդների կյանքը կախված է անտառներից: Իսկապես, մենք կախված ենք անտառներից մեր շնչած թթվածնի և խմած ջրի համար: Մեր հաջորդ քայլը պետք է լինի այն, որ բոլորս մասնակցենք բնության վերականգնման գործին, քանի որ բոլորս անհատապես պատասխանատու ենք մեր մոլորակի համար: Մենք պետք է ապրենք բնության հետ ներդաշնակ. մենք պետք է ապրենք մոլորակի «հետ», այլ ոչ թե մոլորակի «վրա»:

Եթե դուք արդեն աջակցում եք շրջակա միջավայրի պահպանմանը, հիանալի է. եթե ոչ, կարող եք աջակցել «Իմ անտառ Հայաստանին»: Հողի հետ աշխատելու դժվար գործը մենք անում ենք, և ձեր նվիրատվությունն ուղղվում է ծառեր տնկելուն և անտառներ ստեղծելուն:

Շնորհակալություն բոլորիդ:

**ԱՆՏՐԷ ԳՈՒՄՈՒՇՃԵԱՆ**

Հիմնադիր և գլխավոր տնօրեն

# Մեր թիմը

**Անտրէ Գումուշճեան**
Հիմնադիր և գլխավոր տնօրեն

**Լիլիթ Մարտիրոսյան**
Փոխտնօրեն

**Վահե Մարտիրոսյան**
Գործառնական ղեկավար

**Տարոն Ալեքսանյան**
Գիտական մասի պատասխանատու
և ԱՏՀ փորձագետ

**Ալինա Կարապետյան**
Կորպորատիվ կապերի ղեկավար

**Արփինե Ալեքսանյան**
Միջոցառումների համակարգող

**Սաթենիկ Ասիլյան**
Հանրային կապերի և
հաղորդակցության ղեկավար

**Անի Հարությունյան**
Թվային հաղորդակցության
մասնագետ

**Լևոն Մխիթարյան**
Տնկարանի պատասխանատու

**Գեղամ Հակոբյան**
Տնկարանի համակարգող

**Էդվարդ Էդարյան**
Դաշտային աշխատանքների
համակարգող

**Տարոն Ղազարյան**
Դաշտային աշխատանքների
համակարգող

**Մուշեղ Մումչյան**
Դաշտային աշխատանքների
համակարգող

**Սարգիս Պետրոսյան**
Շինարարական աշխատանքների
համակարգող

**Դիանա Կիրակոսյան**
Գլխավոր հաշվապահ

**Մերի Մայիլյան**
Ադմինիստրատիվ օգնական

# Անտառները Հայաստանում

Հայաստանը սակավանտառ երկիր է, և անտառածածկույթի տոկոսը բավարար չէ երկրի բնական էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու համար: Անտառածածկ է ընդամենը 334.000 հեկտարը, որը կազմում է Հայաստանի տարածքի 11%-ը: Անտառները տարածված են անհամաչափ. մեծ մասը գտնվում է հյուսիս-արևելյան և հարավային մասերում, իսկ մնացածը ցրված են երկրի կենտրոնական հատվածներում փոքր կղզյակների տեսքով՝ շրջապատված լեռնատափաստանային բուսականությամբ:

Երկրի անտառների որոշ հատվածներ հատուկ պահպանվող տարածքներ են, ինչպես «Դիլիջան» ազգային պարկը, «Արևիկը», «Խոսրովի անտառը» կամ «Շիկահողը»: Դրանք ներկայացնում են անտառածածկույթի մոտ 20%-ը և ընդգրկում են բուսական և կենդանական աշխարհի բացառիկ բազմազանություն: Անտառները Հայաստանի բազմաթիվ էկոշրջանների մի մասն են կազմում՝ երկիրը դարձնելով կենսաբազմազանության թեժ կետ:

Անտառածածկույթի պակասը խիստ բացասական հետևանքներ ունի Հայաստանի համար և հանգեցնում է հողի էրոզիայի բարձր ցուցանիշի, ջրային ռեսուրսների նվազման և ոչ միայն: Զուգորդվելով կլիմայի փոփոխության և ավելի ու ավելի էքստրեմալ դարձող եղանակային պայմանների հետ՝ այս երևույթները դառնում են էլ ավելի ընդգծված ու վտանգավոր:

Հայաստանը ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի շրջանակներում պարտավորվել է կրճատել իր անտառածածկույթը մինչև 2050 թվականը՝ հետևելով 2015 թվականին իր ազգային մակարդակով ստանձնած պարտավորություններին, և մինչև 2030 թվականն ընդլայնել անտառային ծածկույթը 50.000 հեկտարով: Մենք աջակցելու ենք երկրին այս հավակնոտ նպատակին հասնելու գործում:

# Մեր աշխարհագրությունը

Մենք մեծանում ենք, զգալիորեն ավելանում են նաև անտառապատված տարածքները՝ հօգուտ ավելի շատ համայնքների: 2022 թվականին ավարտեցինք անտառտնկումը Ջրաշեն I և Ջրաշեն II տարածքներում, Շիրակամուտում և «Դիլիջան» ազգային պարկում: Նաև սկսել ենք ՇՄԱԳ գործընթացը անտառապատման նոր տարածքի՝ Ուրասարի համար:

# Տարվա ամփոփումը

**658 671**
տնկած ծառ

**525**
կամավոր

**190**
անտառապատման աշխատող

**202**
հեկտար անտառ

**425 835**
ծառի մուլչապատում

2022 թվականը մեզ համար բացառիկ տարի էր: Այս տարի կրկնապատկեցինք 2021 թվականի մեր արդյունքները: Անտառտնկման մեկ սեզոնի ընթացքում ընդհանուր 116 հա մեր նոր տարածքն ամբողջությամբ անտառապատեցինք: Տնկեցինք Վանաձորի տնկարանում փակ արմատային համակարգով աճեցված մեր առաջին տնկիները: 2022 թվականին ընդհանուր առմամբ տնկել ենք 658.671 ծառ, որոնցից 33.280-ը՝ փակ արմատային համակարգով. կեչի, հաճարենի, հացենի, սոճի, կաղնի, ընկուզենի, վայրի խնձորենի, տանձենի և այլ ծառատեսակներ և թփեր:

Մեր թիմը տարեկան մշտադիտարկում է իրականացնում անտառապատման բոլոր տարածքներում՝ հետևելու նորատունկ ծառերի կպչողունակությանը և աճի առանձնահատկություններին: Կպչողականության մասին խոսելիս հարկ է նշել, որ տնկադաշտում թվերն ամենուր նույնը չեն: Հարավահայաց հատվածներում արևն ավելի է չորացնում հողը, և դա ազդում է կպչողականության վրա, մինչդեռ այլ վայրերում, որտեղ հողային և կլիմայական պայմաններն ավելի բարենպաստ են, կպչողականությունը կարող է հասնել 60-65%-ի, ինչը լավ արդյունք է մեր տարածաշրջանի համար: Արդեն իսկ տեսնում ենք, որ որոշ տարածքներում հաջողել ենք, մինչդեռ այլ հատվածներում հաջորդ տարի անհրաժեշտ կլինի գնահատել, թե երբ և քանի ծառ է պետք վերատնկել:

Մեր դաշտային աշխատանքների համակարգողները տարվա ընթացքում մշտապես վերահսկել են անտառապատման տարածքները և կազմակերպել ցանկապատերի վերանորոգման աշխատանքներ անտառապատման և անտառվերականգնման մեր բոլոր տարածքներում:

# Ջրաշեն I

## Տարածքը՝ 110 հա
## Բարձրությունը՝ 1860 – 2290 մ

Ջրաշեն I-ում տնկման աշխատանքներն ավարտեցինք ապրիլին, իսկ մայիսին մուլչապատեցինք 444.337 տնկի՝ 2021-ի աշնանը և 2022-ի գարնանը տնկված բոլոր տնկիների շուրջը ծղոտ դնելով: Մուլչապատումն օգնում է վերահսկել մոլախոտերի աճը, ինչպես նաև նվազեցնում է ջրի գոլորշիացումը՝ հողը երկար ժամանակ խոնավ պահելով:

# Ջրաշեն II

## Տարածքը՝ 105 հա
## Բարձրությունը՝ 2150 – 2400 մ

Երկար վարչական աշխատանքներից հետո 2022թ. հուլիսին ստորագրեցինք Ջրաշեն II-ի հողի օգտագործման իրավունքի պայմանագիրը: Այնուհետև ձեռնարկեցինք դաշտային նախապատրաստական աշխատանքները: Ընդհանուր առմամբ 4028մ երկարությամբ ցանկապատ կառուցեցինք: Այս տարածքում լրացուցիչ մարտահրավերների հանդիպեցինք. անտառտնկման տարածքներ տանող ճանապարհները դժվարամատչելի էին, իսկ լանջերը՝ զառիթափ: Քանի որ հնարավոր չէր ցանկապատերի նյութերը՝ հատկապես բետոնե սյուները և այլ անհրաժեշտ պարագաներ մեքենայով հասցնել անտառտնկման տարածք, բանվորները դիմեցին կենդանիների՝ ավանակների օգնությամբ բեռի փոխադրման միջոցին: Իրականում սա լավ և էկոլոգիապես նպաստավոր լուծում է լեռներում տեղափոխման աշխատանքներ կազմակերպելու համար:

# Շիրակամուտ

## Տարածքը՝ 86 հա
## Բարձրությունը՝ 1750 - 1900 մ

Շիրակամուտում այս տարի միայն վերատնկման աշխատանքներ ենք արել: Շիրակամուտի տարածքը հիմնականում հարավահայաց է և առավել է տուժում ամառային երաշտից: 86 հա տարածքից ցանկապատել և տնկել ենք 30 հա, որից 10 հա, ինչպես և դեռևս չտնկված 56 հա հարավահայաց են: 2022 թվականին մենք վերատնկեցինք 51.000 տնկի և պարբերաբար ջրեցինք տնկիները: Մենք տնկել ենք հողատարածքի մի մասում՝ նպատակ ունենալով շարունակել աշխատանքները միայն այն ժամանակ, երբ գոհ լինենք արդյունքներից:

# «Դիլիջան» ազգային պարկ

## Տարածքը՝ 20 հա
## Բարձրությունը՝ 1650 մ

Նոր անտառների ստեղծմանը զուգահեռ չափազանց կարևոր է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում անտառային էկոհամակարգի վերականգնումը:

«Դիլիջան» ազգային պարկի ներկայացուցիչների հետ ընտրեցինք պարկի ներսում անտառվերականգնման վայր, որը զբաղեցնում է 20 հա տարածք: Այս տեղամասի անտառվերականգնման աշխատանքները ներառում են տարածքի ցանկապատում, տեղական ծառատեսակների սերմերի ցանքս և ծառատունկ, բայց շատ ավելի քիչ խտությամբ, քան անտառապատման տարածքներում, քանի որ հիմնական նպատակն է օգնել անտառին՝ գտնելու ինքնավերականգնման կարողությունները:

# Ուրասար

## Տարածքը՝ 360 հա
## Բարձրությունը՝ 1725 - 2300 մ

Դեկտեմբերի սկզբին ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն ենք ներկայացրել Ուրասարում անտառվերականգնման ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հայտը: ՇՄԱԳ-ի շրջանակներում համայնքում անցկացրինք մեր առաջին հանրային լսումը և ստացանք դրական արձագանքներ Ուրասարի և շրջակա գյուղերի բնակիչներից՝ անտառվերականգնման մեծ ծրագիր իրականացնելու համար: Շրջակա միջավայրի նախարարությունից ստացել ենք դրական պատասխան և շուտով պայմանագիր կկնքենք համայնքի հետ: Փաստաթղթերը վերջնական տեսքի բերելուն պես կսկսենք ցանկապատել տարածքը, հսկիչ կվարձենք և վերջապես ծառեր կտնկենք:

# Նոր տարածքներ

Ապրիլին ստացանք Շրջակա միջավայրի նախարարության ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացությունը Սարահարթ, Շենավան և Արևաշող համայնքների՝ 1500 հա ընդհանուր մակերեսով տարածքներում անտառապատում իրականացնելու համար: Վարչական քայլերը, որոնք անհրաժեշտ են այս հողերը անտառապատման նպատակով ստանալու համար, ավելի բարդ են և շատ ավելի երկար ժամանակ են պահանջում, բայց մենք հուսով ենք, որ կկարողանանք այս ֆանտաստիկ տարածքներում անտառատունկը սկսել արդեն 2023 թվականի աշնանը:

# Տնկարաններ

Մարտից նոյեմբեր Գուգարքի «Պենժամին Գումուշճեան» և Դեբետի տնկարանների մեր 30-ից ավելի աշխատակիցները քրտնաջան աշխատել են ցանքսի, խնամքի և տնկիների՝ անտառտնկման տարածքներ տեղափոխելու ընթացքում: Տնկիների աճեցման և խնամքի տեխնիկան շարունակաբար բարելավում ենք, քանի որ մենք ձգտում ենք ավելի բարձր արտադրողականության և որակի:

Այս տարի «Պենժամին Գումուշճեան» տնկարանի ցանկապատի երկայնքով բարդիներ, տանձենիներ, սոճիներ, կաղնիներ և թփեր ենք տնկել: Երբ այդ ծառերը մեծանան, հողմապաշտպան դեր կկատարեն և նաև կծառայեն որպես ստվեր որոշ տնկիների համար:

Սկսել ենք ջրահեռացման համակարգերի ներդրումը տնկարաններում՝ ջրի հոսքերը վերահսկելու և հորդառատ անձրևներից կամ ձյան հալոցքից հետո սածիլների վնասումից խուսափելու համար: Այս կարևոր գործը կշարունակենք նաև հաջորդ տարի: Հատուկ սխեմա է կիրառվել նաև սերմը ցանելիս՝ հողի հոսքից խուսափելու համար:

Մեր շինարարական թիմն ավարտել է Դեբետի տնկարանում աշխատողների տնակի վերանորոգումը: Գործող մետաղական տնակի մի մասը վերածվել է պահեստի:

Տարվա ընթացքում մեր երկու տնկարանների ոռոգման համակարգերը պարբերաբար նորոգվել են:

Եվ վերջապես, «Պենժամին Գումուշճեան» տնկարանում բացեցինք մեր «Հյուրերի ծառուղին», որտեղ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարը և Լոռու մարզպետի տեղակալը տնկեցին առաջին կեչիները:

# Սերմեր

Սեպտեմբերից մինչև հոկտեմբերի վերջ մեր տնկարանի աշխատակիցները հավաքեցին մեծ քանակի սերմեր՝ տանձի, խնձորի, լորենու, բոխու և թխկու: Մենք նաև զգալի քանակությամբ սերմեր ենք գնել գյուղացիներից: Բոլոր տեսակների սերմերը ժամանակին մաքրվել են, չորացվել և ցանվել:

Մեզ միացան նաև կամավորների մի քանի խմբեր՝ վայրի տանձ հավաքելու համար: Թեև այս գործը տարբերվում է ծառ տնկելուց, այն օգնում է մարդկանց հասկանալ ծառ աճեցնելու, անտառ ստեղծելու ամբողջ շղթան և յուրաքանչյուր քայլում որակյալ աշխատանք կատարելու կարևորությունը:

# Ջերմոց

Այս տարի առաջին անգամ տնկարկ տեղափոխեցինք ջերմոցում աճեցված տնկիները:

Ջերմոցն ունի 72.000 տնկի աճեցնելու հնարավորություն: Թաղարներում փակ արմատային համակարգով աճեցվող տնկիներն ունեն բազմաթիվ առավելություններ. դրանք ավելի կենսունակ են տնկվելուց հետո, քանի որ տնկման և աճի ողջ ընթացքում արմատային համակարգը չի խաթարվում, իսկ սածիլները չեն վնասվում տեղափոխման ընթացքում: Սա կարճ ժամանակահատվածում առողջ և կենսունակ տնկիներ ունենալու և անտառվերականգնման աշխատանքների ընթացքում կպչողունակության ավելի բարձր մակարդակ ստանալու հնարավորություն է տալիս: Ավելին, թույլ է տալիս երկարացնել տնկման ժամանակահատվածը մի քանի շաբաթով և այդպիսով ավելի շատ ծառեր տնկել մեկ սեզոնի ընթացքում:

Անտառապատման և անտառվերականգնման ծրագրերի համար թաղարներում տնկիների աճեցումը շատ երկրներում նախընտրելի մեթոդ է: Մշտադիտարկման առաջին արդյունքները, որոնց սպասում ենք մեծ ոգևորությամբ, կունենանք 2023 թվականի աշնանը:

# Ծառատեսակներ

Անտառները բարդ էկոհամակարգեր են: «Իմ անտառ Հայաստանում» մեր նպատակն է ստեղծել մնայուն անտառներ՝ որքան հնարավոր է մոտ բնական անտառներին: Կենսաբազմազանություն ապահովելու համար մենք տնկում ենք բազմաթիվ տեղական ծառատեսակներ, ինչպես նաև թփերի տարբեր տեսակներ, քանի որ դրանք գրավում են միջատներին և թռչուններին, ինչն էական է ուժեղ էկոհամակարգեր ստեղծելու համար: 2022 թվականին մենք տնկել ենք 13 տարբեր տեսակի ծառեր՝ ընդհանուր թվով 658.671:

Սոճի սովորական
401.588

Կաղնի արևելյան
111.904

Թխկի սրատերև
48.250

Խնձորենի արևելյան
33.524

Տանձենի կովկասյան
28.818

Թխկի սպիտակ
15.250

Ընկուզենի սովորական
6.300

Թխկի դաշտային
5.000

Լորենի մանրատերև
2.450

Հաճարենի արևելյան
2.015

Կեչի Լիտվինովի
1.517

Արոսի Կուզնեցովի
1.355

Բոխի կովկասյան
700

# Մարտահրավերներ

Անտառների վերականգնման գործում մարտահրավերները բազմաթիվ են՝ սկսած կլիմայի գլոբալ փոփոխությունից, որն ազդում է մեր անտառապատման տարածքներում տեղումների քանակի և խոնավության վրա, մինչև ֆիզիկական դժվարությունները, որոնք պետք է հաղթահարեն ծառ տնկողները՝ չնշելով անտառապատման համար տարածքներ ապահովելու համար երկարատև և երբեմն բարդ վարչական քայլերի մասին:

ՀՀ տարածքի շուրջ 80%-ը ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման, ինչը ոչ միայն մարդածին գործունեության արդյունք է, այլև կրում է բնական գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են հողերի ջրային և հողմային էրոզիան, խորշակները, երաշտը, խոնավության պակասը, սողանքային երևույթները, բնական աղակալում-ալկալիացումը և այլն*: Այս իրավիճակը մեր գործողությունները դարձնում է ավելի հրատապ, քան երբևէ, քանի որ անտառածածկույթն ավելացնելու հնարավորությունը կարող է երկար չտևել: Մեր անտառագետների թիմի համար ամեն օրը մշտական պայքար է՝ համոզվելու, որ տնկիները լավ են աճում և ի վերջո մի օր կդառնան անտառի մի մասը:

Ամեն ինչ սկսվում է հարմար տարածքներ գտնելու համար գիտական հետազոտություններից, քանի որ մենք չենք կարող բնական անտառներ ստեղծել ցանկացած տեղ: Այնուհետև անհրաժեշտ է ընտրված տարածքին հարմար ծառերի տեսակային կազմը որոշել և աճեցնել բավարար քանակությամբ տնկիներ, գտնել և պատրաստել անտառտնկման աշխատակիցների, ի վերջո կազմակերպել ու վերահսկել 200 հոգուց բաղկացած թիմի աշխատանքը: Սա պահանջում է աշխատանքի անթերի ընթացք, որպեսզի մեր տնկարանները ժամանակին մատակարարեն բավարար քանակությամբ տնկիներ: Սա նաև պահանջում է ճիշտ ժամանակին կազմակերպել աշխատակիցների դերաբաշխումը:

Մեր կազմակերպության աճի հետ մեկտեղ մեր առջև կանգնող մարտահրավերներից մեկն է համոզվել, որ ծառ տնկողները կկարողանան օպտիմալ աշխատել տնկման շատ կարճ ժամանակահատվածում: Քանի որ մենք տնկում ենք հիմնականում բաց արմատային համակարգով տնկիներ, պետք է սպասենք մինչև աշուն, մինչև տնկիները քուն մտնեն, ապա տնկենք դրանք որքան հնարավոր է արագ, քանի դեռ ձմեռը և ձյունը չեն խանգարել աշխատանքին: Գարնանը հակառակն է: Երբ սկսում ենք տնկել, լեռների որոշ մասեր դեռ ձյունածածկ են: Այդ ժամանակ պետք է աշխատենք որքան հնարավոր է արագ, քանի դեռ չի սկսվել բույսերի հյութաշարժը: Արտադրողականությունն առավելագույնի հասցնելու համար մեզ անհրաժեշտ է համոզվել, որ աշխատողները կկարողանան հնարավորինս հեշտությամբ մուտք գործել տնկման տարածքներ: Քանի որ մեր տնկարկները գտնվում են լեռնային տարածքներում, միշտ չէ, որ կան ճանապարհներ, կամ եղածները լավ վիճակում են: Մենք բավականին արագ ենք գործում օրիգինալ լուծումներ գտնելու հարցում: Այս տարի օրինակ ձիերով և ավանակներով ենք տնկիների մասը բարձրացրել սարը: Իրականում սա շատ արդյունավետ և միևնույն ժամանակ էկոլոգիապես մաքուր լուծում էր:

Մյուս հիմնական մարտահրավերը կպչողունակության բարձր ցուցանիշ ապահովելն է: Այսուհետ մենք պիտի ընտրենք միայն լավագույն որակի հողերը մեր ապագա անտառվերականգնման ծրագրերի համար: Տարածքներն այնքան ընդարձակ են, որ անհնար է ջրել նորատունկ ծառերը: Անհրաժեշտ է ընտրել հողատարածքներ, որտեղ վեգետացիայի շրջանում, այսինքն՝ մայիսից մինչև սեպտեմբեր, մեծ քանակությամբ տեղումներ են լինում, և որոնք հիմնականում հյուսիսահայաց լանջերին են:

2022 թվականին աշխատել ենք Ջրաշեն համայնքի անտառապատման տարածքներում, որոնք կիսաչորային են: Ջրաշեն I-ի զգալի տարածքն ունի հարավ և հարավ-արևմուտք ուղղվածություն, և այդ հատվածներում արդյունքներն ամենուր չեն գոհացուցիչ: Այնուամենայնիվ, Ջրաշեն II-ը պետք է շատ ավելի լավ արդյունքներ ապահովի:

Եկող տարի մենք տնկելու ենք Ուրասարում, որը կատարյալ հող է անտառվերականգնման համար՝ բարձր խոնավությամբ և տեղումների բավարար քանակով: Մենք շատ ոգևորված ենք այս նոր նախագծով և անհամբեր սպասում ենք արդյունքներին:

* ՄԱԿ ԿՓԾԿ ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրություն, 2020

# Հայաստանի անտառային դաշինք

Մենք հպարտ ենք տեղեկացնել, որ ակտիվորեն աշխատել ենք՝ մեր գործընկերներ «Էյ-Թի-Փի» հիմնադրամի և «Շեն» հասարակական կազմակերպության հետ միասին ստեղծելու Հայաստանի անտառային դաշինքը:

Մեր երեք կազմակերպությունները, որոնք ակտիվ են Հայաստանում անտառվերականգնման և անտառտնկման ոլորտում, որոշել են միավորվել անտառային էկոհամակարգերի պահպանության և վերականգնման շուրջ, նաև՝ աջակցելու Հայաստանում անտառածածկույթի ավելացմանը: Դաշինքի միջոցով մենք նպատակ ունենք մեկ ձայնով խոսել պետական պաշտոնյաների և հանրային քաղաքականություն մշակողների հետ, ինչպես նաև բարձրացնել հանրության իրազեկվածությունը անտառների կարևորության, դրանց առջև ծառացած վտանգների և անտառների պահպանման հնարավոր լուծումների մասին:

Հայաստանի անտառային դաշինքի առաջնահերթություններն են.

- Անտառապատման համար նոր հողերի հատկացումներ,
- Բնական անտառների պահպանություն և վերականգնում,
- Խորհրդային ժամանակաշրջանում տնկված անտառների կայուն կառավարում և պահպանում,
- Խոտհարքների հրդեհման կանխում:

Իր նպատակներին հասնելու և առաքելությունն իրականացնելու համար Դաշինքը.

- Կանոնավոր կերպով կկազմակերպի կլոր սեղաններ պետական մարմինների և անտառների հետ կապված այլ շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են համալսարանները, ՀԿ-ները, միջազգային կազմակերպությունները և այլն՝ տարբեր թեմաներ քննարկելու և կոնկրետ արդյունքներ ապահովելու նպատակով:
- Աշխատանքային խմբերով կհամագործակցի պետական մարմինների հետ՝ գործնական քայլեր ապահովելու համար:
- Կբարձրացնի հանրային իրազեկվածությունը անտառների և ընդհանրապես ծառերի կարևորության վերաբերյալ տարբեր հաղորդակցման միջոցներով, ինչպիսիք են մամուլը, սոցիալական լրատվամիջոցները, ցուցահանդեսները և այլն:

Դաշինքը բաց է և ողջունում է անտառվերականգնման կամ անտառի պահպանման ոլորտում գործող բոլոր այն կազմակերպություններին, որոնք համապատասխանում են Դաշինքի Կանոնադրությանը: Հայաստանի անտառային դաշինքը հուսով է լայնածավալ և տևական դրական ազդեցություն ունենալ Հայաստանի անտառների վրա:

# ՄԱՐԴԻԿ, ովքեր անտառ են տնկում

*«Չգիտեմ մենք կլինենք, չենք լինի, մի երեսուն տարի հետո այստեղ անտառ կդառնա, մենք լավ կզգանք, որ երեսուն տարի առաջ էս ծառերը մենք ենք տնկել»:*

**Վահրամ,**
**Անտառտնկման աշխատող**

*«Որ նվիրվում ես գործիդ, ինձ թվում ա, ամեն ինչ ստացվում ա»:*

**Աննա**
**Տնկարանի աշխատող**

*«Կյանք ես տալիս ծառին: Ծառը երբ որ տնկում ես, պետք է քո աշխատանքն այնպես կատարես, որ ծառը կյանք ստանա»:*

**Տաթևիկ**
**Անտառտնկման աշխատող**

# Ֆինանսներ

2022 թվականին մեր ծախսերը կազմել են 270.907.665 դրամ կամ շուրջ 677.000 ԱՄՆ դոլար: Մենք շատ հետևողական ենք՝ նվազագույնի հասցնելու մեր լոգիստիկ և վարչական ծախսերը: Չնայած տնկիների աճեցման, ծառատունկի և ծառերի խնամքի ծախսերը կազմում են մեր բյուջեի հիմնական մասը, զգալի մաս են կազմում նաև հարկերը, ինչ համար ուրախ ենք, քանի որ նաև Հայաստանի Հանրապետության բյուջեում ենք մասնակցություն ունենում:

## Բյուջեի բաշխում




## Հանգանակված միջոցներ



# Մեր գործընկերները

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն

ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտե

«Դիլիջան» ազգային պարկ

Լոռու մարզպետարան
Դիլիջանի համայնքապետարան
Սպիտակի համայնքապետարան
Ստեփանավանի համայնքապետարան

# Նվիրատու կազմակերպություններ

# Անհատ նվիրատուներ

## Միանգամյա

Մարլեն Դյուրինքս
Դեյվիդ և Պատրիսիա Գրեյսոն
Թոդ Զանատա
Արման Ակիլյան
Պրիտի Ֆլանագան
Դավիդ Սասսուն
Ուբերտո Ֆումագալլի Ռոմարիո
Գեղամ Մինասյան
Աննի Մաթոսյան
Ջոել Կարլբերգ Թորսել
Լուկա Սոպելսա
Շանթ Խաչադուրյան
Ռաֆֆի Բաչյան
Սուրեն Սերոփյան
Դիրք Քրիստիեն
Սոսե Ամիրխանյան
Անահիտ Եփրիկյան
Ալինա Կարապետյան
Քրիստոֆ Քրիստիեն
Յուրի Ցիգանենկո
Նարեկ Շուխյան
Ալլա Եղիազարյան
Նորա Սերգանի
Հեղինե Ալեքսանյան
Սաթենիկ Ասիլյան
Էլս Վան Փերիս
Տիգրան Վեշիա
Լուսին Գրիգորյան
Լուսինե
Անդրանիկ Ռաթևոսյան
Բաստիեն Կարնիել

## Ամսական

Թոդ Զանատա
Անտրէ Գումուշճեան
Մարլեն Դյուրինքս
Էյ-Վի Գումուշճեան Էն-Վի
Հովհաննես Հայրյան
Սերժ Արթունոֆ
Ֆիլիպ Ֆրանսուա
Ազի Մելքոնյան
Բոչաչիյան Օննիկ
Ալեքսանդր Կաժյան
Ա. Ճանիկ Գումուշճեան
Անի Հարությունյան
Շուշանիկ Գեղամյան
Արթուր Փոքրիկյան
Լիլիթ Մարտիրոսյան
Բերնար Կարեթ
Օլյա Հակոբյան
Հ. Մանուկյան
Լուսինե Մեսրոպյան
Վահե Մարտիրոսյան
Արսեն Հակոբյան
Անահիտ Եփրիկյան
Մերի Մայիլյան
Քրիստիան Վան Դեն Բոգերտ
Էշլի Մորգան
Լուսե Շահնազարյան
Արեգա Շահնազարյան

Շնորհակալություն նաև բոլոր նրանց, ովքեր նվիրատվություն են կատարել անանուն:

# Տնկեք ծառեր հանուն կյանքի

«Իմ անտառ Հայաստան»
բնապահպանական ՀԿ
ՀՀ, ք. Երևան 0038,
Աբեյյան փ. 6/4
+374 11 202 919
info@myforestarmenia.org
www.myforestarmenia.org